

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ԷԲԱ ԲԱԲԱՅԱՆ, աշխ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի
առաջատար գիտաշխատող

ԱՐԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ

տնտեսագետ

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ԱԶԴՈՂ
ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Շուկայական տնտեսության ձևավորման նպատակով հանրապետությունում իրականացվող բարեփոխումներն իրենց խորը ազդեցությունն ունեցան ինչպես ապրանքային շուկաների, այնպես էլ ծառայությունների ոլորտի վրա: Ընդհանուր առմամբ «ծառայությունների ոլորտն» իր մեջ ներառում է մարդու կողմից իրականացվող տնտեսական գործունեության բազմաթիվ տեսակների մի համակարգ: Տնտեսագիտական գրականության մեջ գոյություն ունի դրա բնորոշման մի քանի տարբերակներ, որոնք, երբեմն, հակասում են մեկը մյուսին: Դա նշանակում է, որ ուսումնասիրվող երևույթը բավականին բարդ է ու բազմաբնույթ: Այսպես, արևմտյան որոշ տնտեսագետներ գտնում են, որ այն ամենը ինչը կապված չէ օգտակար հանածոների արդյունահանման, արդյունաբերության ու գյուղատնտեսության հետ կարելի է վերագրել ծառայություններին: Այս մեթոդով են սահմանվում ծառայությունները արևմտյան երկրների ազգային հաշիվներում, որը, մեր կարծիքով, շատ ընդհանուր մոտեցում է, քանի որ թույլ չի տալիս մանրամասն դիտարկել այս երևույթը և հնարավորություն չի տալիս կոնկրետ սահմանել «ծառայություն» հասկացությունը: Բացի այդ, արտասահմանյան գրականության մեջ հանդիպում են տարբեր կարծիքներ այն մասին, թե ծառայությունները կարելի՞ է արդյոք դիտարկել որպես վերջնական արդյունք, եթե այն հանդիսանում է արտադրական գործընթացի միջանկյալ, և անհրաժեշտ օղակներից մեկը: Այսինքն, տարածայնությունը հիմնականում վերաբերում է «ապրանք» և «ծառայություն» հասկացությունների տարբերությանը: Այսպես, ամերիկյան տնտեսագետ Թ.Հիլը պատկանում է այն հեղինակների թվին, ովքեր գտնում են, որ այդ հասկացությունները տարբեր են: Նա նշում է, որ. «Ի տարբերություն ապրանքների, որոնք ունեն անփոփոխ նյութականացված հատկություններ, ծառայություններին հատուկ են դրանց սպառողների վիճակի վրա ազդելու հատկությունը (օրինակ՝ բուժ. սպասարկում, կրթություն), կամ նյութական աշխարհի ապրանքների վրա ազդեցությունը (ապահովագրություն, գովազդ), կամ էլ միաժամանակ և՛ մեկը, և՛ մյուսը (օրինակ՝ բանկային և ֆինանսական ծառայություններ)»¹: Մի քանի այլ տնտեսագետների հետ միասին Թ.Հիլը գտնում է, որ «ծառայություն» հասկացության էության պարզեցման համար անհրաժեշտ է ուսումնասիրել դրանց ֆունկցիոնալ բնութագրերը: Այսինքն, ո՞րն է «Ապրանք» և «ծառայություն» հասկացությունների հիմնական տարբերությունը: Այս խնդիրը բավականին մանրամասն դիտարկել են Թ.Հիլը, Ֆ.Նիկոլեյդսը և Դ.Նայարը: Նրանք նշում են, որ. «ապրանքները նյութական են, իսկ ծառայությունները ոչ նյութական, որոնք չի կարելի պահպանել և տեղափոխել: Հետևաբար, ծառայությունների մատուցումը և սպառումը համընկնում են ժամանակի և տարածության մեջ, իսկ ծառայության մատուցման պահին արտադրողն ու սպառողն անմիջական կապի մեջ են մտնում»²: Ուսումնասիրելով ծառայությունների ֆունկցիոնալ բնութագրերը Թ.Հիլը

¹ T.Hill "About services and goods" pg. 318-319.

² Նույն տեղում:

դրանք սահմանել է որպես տնտեսական հարաբերությունների որևէ մասնակցին պատկանող առարկայի, կամ մարդու վիճակի փոփոխություն, որին հասնում են տվյալ հարաբերությունների այլ մասնակցի (մասնակիցների) գիտակցված գործունեության արդյունքում՝ նախնական պայմանավորվածության հիման վրա: Ծառայությունը, որպես տնտեսագիտական հասկացություն, արտահայտում է որոշակի տնտեսական հարաբերություններ: Գրականության մեջ հանդիպում է նաև այն կարծիքը, որ ծառայությունների ոլորտի, որպես տնտեսագիտական հասկացության, ուսումնասիրումը հնարավոր է միայն ծառայությունները որպես որոշակի բարիքներ դիտարկելու դեպքում: Այսինքն, տվյալ պարագայում ծառայությունների ոլորտի յուրահատկությունն արտահայտվում է երկու կարևոր ուղղությամբ՝ սպառողին ներկայանալու ձևով և դրա ֆունկցիոնալ նշանակությամբ:

Ռուս տնտեսագետ Ս.Ժուկովի կարծիքով, «Ծառայությունների ոլորտը, որի կառուցվածքային տարրերն ուղղված են տարբեր տեսակի նյութական, հոգևոր և այլ պահանջմունքների բավարարմանը, կարևոր դեր է խաղում սպառողական շուկայում հավասարակշռության պահպանման, աշխատուժի վերարտադրության և աշխատողների ազատ ժամանակի ռացիոնալ օգտագործման բնագավառներում: Ծառայություններին են վերաբերվում աշխատանքի բոլոր այն տեսակները, որոնք անմիջականորեն զբաղված չեն նորմաիրային ձևերի և բնության ուժերի փոփոխությամբ, ստեղծում են հատուկ տեսակի սպառողական արժեք, որն օգտագործվում է տնտեսության տարբեր ճյուղերում և իրացվում արտադրական ու ոչ արտադրական սպառողների կողմից»¹:

Այսպիսով, ծառայությունները հանդես են գալիս որպես աշխատանքային կոնկրետ գործունեության տեսակ կամ տնտեսական հարաբերությունների ձև, որոնց արդյունքում ստեղծվում է յուրահատուկ սպառողական արժեք:

Ընդհանուր առմամբ, եթե ի մի բերենք տարբեր հեղինակների մոտեցումները, կարելի է հանգել այն հետևության, որ ծառայությունները նյութական արտադրությունից տարբերվում են հետևյալ հիմնական հատկանիշներով.

- Ծառայություններն ընդհանրացվում են իրենց տեսակների ծագման և պատմական զարգացման բնույթով, որոնք սկզբնական շրջանում անմիջականորեն ներգրավված են եղել արտադրության ոլորտում, իսկ հետագայում (աշխատանքի հասարակական բաժանման խորացման արդյունքում) առանձնացել են տնտեսության ինքնուրույն ճյուղերի և ենթաճյուղերի տեսքով: Ներկայումս այդ գործընթացը շարունակվում է, որի օրինակ կարող է ծառայել տեղեկատվական-հաղորդակցական ոլորտի ձևավորումը:
- Ծառայությունների և նյութական բարիքների արտադրությունները միմյանցից տարբերվում են ծառայությունների վերջնական սպառմանն ավելի մոտ գտնվելու հատկանիշով: Ավելին, ծառայությունների շատ տեսակների մատուցումն ու սպառումը ժամանակի և տարածության տեսանկյունից համընկնում են: Ծառայության օգտակարությունը սպառողի կողմից գնահատվում է մատուցելուց հետո, քանի որ սպառողը նախօրոք չի կարող իմանալ ծառայության սպառողական հատկությունների մասին: Սպառողը ծառայության ոլորտի աշխատողների աշխատանքը կարող է գնահատել միայն այլ սպառողների կարծիքի և գովազդի հիման վրա, որը կարող է նաև ճիշտ չընկալվել: Մի շարք ծառայություններ մարմնավորվում են նյութական օբյեկտներում և իրացվում են որպես ապրանքներ (օրինակ տեսաֆիլմերը, նկարները և այլն): Բայց այս դեպքում ևս ծառայության օգտակարությունը որոշվում է հաղորդվող տեղեկատվության որակով, իսկ դրա նյութական հիմքը՝ տեղեկատվության կրողը, ուղեկցող և օժանդակող դեր է խաղում:
- Ծառայությունների «շոշափելի չլինելու» արդյունքում դժվարանում է դրանց պահպանումն ու տեղափոխումը, իսկ ընդհանուր առմամբ՝ շուկայի կենտրոնացումը (օրինակ՝ թատրոնի չզբաղեցված տեղերից ստացվելիք եկամուտն անվերադարձ կորչում է), իսկ ծառայության

¹ Жуков С.В. “Развивающиеся страны: сфера услуг и экономический рост”, стр. 5.

պահպանման անհնարինությունը մեծացնում է այն մատուցողի ռիսկի աստիճանը: Ծառայությունների ոլորտում, նյութական արտադրության համեմատ, ավելի շատ պետք է հաշվի առնվի ժամանակի գործոնը (առաջարկի սեզոնային նվազեցումը, օրվա ընթացքում պահանջարկի տատանումները), որի հետ կապված ծառայությունների շուկայում առաջարկի ու պահանջարկի հավասարակշռման հատուկ միջոցառումների իրականացման անհրաժեշտություն է առաջանում (օրինակ նախնական պատվերների, դիֆերենցված գների կիրառումը, ժամանակավոր աշխատողների ներգրավումը և այլն):

- Ծառայությունը, որպես կանոն, չի բաժանվում իր արտադրողից, և ծառայությունների ոլորտն էլ իրենից ներկայացնում է ծառայություն մատուցողի և սպառողի անձնական կապերի մեծ դաշտ: Ծառայությունների նկատմամբ սպառողների պահանջների խստացման և ծառայությունների տեսականու հետզհետե ընդլայնման արդյունքում աճում է անհատական փոխհարաբերությունների (կապերի) և ծառայություն մատուցողի (արտադրողի) որակավորման դերը:
- Ծառայությունների շատ տեսակներ հանդես են գալիս մարդկային «կենդանի» գործունեության տեսքով: Մարդը մասնակցում է ոչ թե որպես տեխնիկական, այլ որպես սուբյեկտիվ գործոն, որը հաճախ բացասական ազդեցություն է թողնում և նույնիսկ տեխնիկական միջամտության արդյունքում հնարավոր չի լինում փոքրացնել այդ ազդեցությունը:

Ծառայությունների ոլորտի ընդլայնման գործում զգալի դեր խաղաց նաև գիտատեխնիկական առաջընթացը (ԳՏԱ): Արտադրանքի գիտատարության մակարդակի բարձրացումը առաջին հերթին տարավ ապրանքների արժեքում ծառայությունների արժեքի, իսկ վերջին հաշվով նաև տրանսակցիոն ծախսերի տեսակարար կշռի բարձրացմանը, և երկրորդը ԳՏԱ-ի ազդեցությամբ որոշ ապրանքներ նույնիսկ դասվեցին ծառայությունների շարքում: Ըստ Ֆ.Նիկոլեյդսի. «Ծառայությունների ոլորտի աճի հիմնական խթանը հանդիսանում է ԳՏԱ արագացումը և նոր տեխնոլոգիաների ներդրումը, ինչը անհրաժեշտ նախապայմաններ է ստեղծում տնտեսության մասնագիտացման հետագա խորացման և ծառայությունների ոլորտի սոցիալականացման միտման ուժեղացման համար»¹:

Ռուս տնտեսագետ Ե.Ժիլցովը գտնում է, որ բացի ԳՏԱ-ի ազդեցությամբ նյութական արտադրությունում աշխատանքի արտադրողականության և հիմնական միջոցների հատույցի աճից, ծառայությունների ոլորտի աճին նպաստում են նաև որոշ այլ գործոններ, մասնավորապես ուրբանիզացիան և բնակչության ծերացումը: Քանի որ քաղաքներում ծառայությունների սպառման մակարդակն ավելի բարձր է, ուստի ուրբանիզացիայի բարձր մակարդակն էլ իր հերթին ազդում է ծառայությունների նկատմամբ պահանջարկի աճի վրա:

Ամերիկյան տնտեսագետ Ք.Լավելոքը գտնում է, որ ծառայությունների ոլորտի աճի դինամիկան փոփոխվում է հետևյալ գործոնների ազդեցությամբ.

- պետական կարգավորման մոդելների փոփոխություն,
- ստանդարտացման մասնագիտացված ասոցիացիաների գործունեության փոփոխություն,
- սեփականաշնորհում,
- համակարգչային տեխնիկայի և տեխնոլոգիաների զարգացում,
- «ֆրանչայզինգի» զարգացում,
- վարձույթի և վարձակալական հարաբերությունների ընդլայնում,
- արտադրող կազմակերպություններում մասնավոր ծառայությունների կենտրոնի ստեղծում,
- հասարակական և ոչ եկամտաբեր կազմակերպությունների վրա ֆինանսական ճնշում,
- ծառայությունների գործարարության միջազգայնացում (գլոբալացում):

Զարգացող երկրներում ծառայությունների ոլորտի դինամիկայի վրա բացասաբար ազդող հիմնական գործոններն են.

- մեկ շնչին ընկնող սպառման ցածր մակարդակը,

¹ Nicolaides P.H. The problem of regulation in traded services. The implications for reciprocal liberalization: Aussenwirtschaft-Zurich 1989, p. 32.

- բնակչության գնողունակ պահանջարկի անհավասարաչափ բաշխվածությունը,
- գյուղական և քաղաքային բնակչության սպառման միջև առկա լուրջ տարբերությունները,
- ապրանքների տարբեր խմբերի նկատմամբ եղած պահանջարկի ճկունության տարբերությունները, որտեղ մի կողմից արտահայտվում են սպառողական նախասիրություններն ու հնարավորությունները, իսկ մյուս կողմից՝ գների հարաբերական դինամիկան:

Ներկայումս, զարգացած երկրներում տեղի է ունենում անցում արդյունաբերական տնտեսությունից դեպի, այսպես կոչված, «սպասարկման տնտեսություն», որը կապված է ծառայությունների ոլորտի դերի ու նշանակության բարձրացման հետ: Ըստ Նեշաթել (Շվեյցարիա) քաղաքի համալսարանի պրոֆեսոր Մ.Կոստեցկիի, ծառայություններն աստիճանաբար դառնում են տնտեսության զարգացմանը նպաստող գլխավոր ուժը: Նա սպասարկման տնտեսության ձևավորման բնորոշ գծերն է համարում¹.

- նյութական արտադրության աճի ցածր տեմպերը,
- նյութական արտադրանքի իրացման բարդացումը, սպասարկման տնտեսությունում արդյունաբերական շատ կազմակերպությունների կողմից ծառայությունների մատուցման ընդլայնումը,
- ծառայությունների շուկայում մրցակցության ուժեղացումը,
- պետական ծառայությունների ոլորտի ապաքյուրոկրատացումը, որն աստիճանաբար ենթարկվում է արդյունավետության բարձրացման պահանջներին,
- պլանային տնտեսության վերափոխումները (անցումը սպասարկման տնտեսությանը նպաստեց պլանային հիմունքներով գործող տնտեսությունների փլուզմանը),
- տնտեսության ճյուղային կառուցվածքում ծառայությունների կենտրոնական տեղը:

Ծառայությունների ոլորտի աճի ընթացքում տեղի ունեցող կազմակերպչական և սոցիալ-տնտեսական տեղաշարժերում կարևոր նշանակություն ունի արտադրության և կապիտալի կենտրոնացումը, թեև այդ գործընթացը ծառայությունների մատուցման ոլորտում սկսվեց ավելի ուշ, քան նյութական արտադրության ճյուղերում: Ծառայությունների մատուցման ոլորտում արտադրության և կապիտալի խոշորացման համար անհրաժեշտ նախադրյալներ ստեղծվեցին ի հաշիվ տեխնիկական, տնտեսական և սոցիալական գործոնների: Արտադրության կենտրոնացմանը խթանում էին նաև սպառողական պահանջարկում տեղի ունեցող փոփոխությունները, որոնք բավականին սուր մրցակցություն բերեցին իրացման և կապիտալի շարժի իմաստով: Միաժամանակ, ծառայություններին բնորոշ յուրահատկությունները (անտեղափոխելիությունը, ժամանակի և տարածության մեջ արտադրության և սպառման համընկնելը) առանձին տնտեսավարող սուբյեկտներին թույլ չէին տալիս զարգանալ: Հետևաբար՝ այդ պայմաններում անհրաժեշտություն է առաջանում միավորելու մի քանի ոչ արտադրական կազմակերպություններ: Միավորման բազմաթիվ ձևերից, ծառայությունների ոլորտում առավել տարածված են շղթայական համակարգերը, որոնք համակցում են մի շարք միատեսակ գործունեություն իրականացնող կազմակերպություններ, որոնց հաճախորդների հետ ունեցած գործառնությունները (տարածքային առումով) ապակենտրոնացված են, իսկ վարչական, ֆինանսական և այլ տեսակի գործունեությունները՝ կենտրոնացված: Շղթայական համակարգերի կազմակերպչական սկզբունքներում կան որոշ տարբերություններ: Այսպես, մի քանի ֆիրմաներում օպերատիվ միավորների գործունեությունը ստանդարտացված է և կարգավորվում է կենտրոնից, իսկ մյուսներում՝ թույլ է տրվում սպասարկման մեթոդների բազմազանություն: Վերջիններիս կառավարման մարմիններն ինքնուրույն են հանդես գալիս ընդգրկում հարցերի հետ կապված որոշումներ ընդունելիս, իսկ կազմակերպության տարածքային ապակենտրոնացումը թույլ է տալիս ծառայության մատուցումը մոտեցնել սպառողներին: Կազմակերպչական գործառնության կենտրոնացման հաշվին կրճատվում են վարչական ծախսումները: Շղթայական համակարգերը լայն հնարավորություն ունեն վերահսկելու սպասարկման որակը:

¹ М. Костецкий, Становление “сервисной экономики” журнал: “Проблемы теории и практики управления” 1995 г., N 1, стр. 11.

Ծառայությունների միավորումները հանդես են գալիս նաև այլ ձևերով: Նկատելիորեն աճում են արտադրական կազմակերպությունների գործունեության սահմաններում, սպասարկման գծով մի քանի ձևերի համակցման տեսակները: Քանի որ մրցակցային սուր պայմանները ստիպում են միևնույն տեղում սպառողին մատուցել ծառայության մի քանի տեսակներ:

Ծառայությունների կենտրոնացման բնորոշ գիծը կայանում է նրանում, որ այդ գործընթացը, որպես կանոն, չի տանում փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեության լուծարմանը, այլ ուժեղացնում է արտադրության կառուցվածքի տարանջատումը (դիֆերենցումը):

Այսպիսով, ծառայությունների արտադրության ժամանակակից կառուցվածքը ներկայացվում է տարբեր չափերի և մասնագիտացման տարբեր մակարդակների արտադրական կազմակերպություններով, որոնց գոյությունը և կառուցվածքը պայմանավորված է սպառողական պահանջարկին համապատասխան գործառնությունների տարանջատմամբ: Ծառայությունների ոլորտի կազմակերպչական կառուցվածքի տեղաշարժերը կապված են արտադրության աճի, աշխատանքի հասարակական բաժանման խորացման, ԳՏԱ-ի, սպառողական պահանջարկի ընդլայնման և տարանջատման, ծառայությունների մատուցման բնույթի և այլ պատճառների հետ: Ի վերջո, ծառայությունների կենտրոնացումը տեղի է ունենում գրեթե նույն այն պատճառներով, ինչ որ նյութական արտադրության կենտրոնացումը և զարգանում է մոտավորապես նույն ուղղություններով, միայն այն տարբերությամբ, որ եթե նյութական արտադրությունում քիչ են միջին չափի կազմակերպությունները, ապա ծառայությունների ոլորտում մեծ մասշտաբներով պահպանվում է մանր արտադրությունը, և լայն տարածում են գտնում այդ կազմակերպությունների շրջայական միավորումները: Վերջիններովս էլ պայմանավորված կազմակերպությունների մասնագիտացման միտումն էլ իր հերթին ուղեկցվում է տարածքային առումով դրանց տարբեր տեսակների ակտիվ համախմբմամբ:

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ԳԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ
ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ԷԲԱ ԲԱԲԱՅԱՆ, աշխ. գիտ. թեկ., պրոֆեսոր

ԱՐԱՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Զորանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի
առաջատար գիտաշխատող

տնտեսագետ

Համառոտագիր

Ընդհանուր առմամբ «ծառայությունների ոլորտ» իր մեջ ներառում է մարդու տնտեսական գործունեության բազմաթիվ տեսակների մի համակարգ: Տնտեսագիտական գրականության մեջ գոյություն ունի դրա բնորոշման մի քանի տարբերակներ, որոնք, երբեմն, հակասում են մեկը մյուսին: Դա նշանակում է, որ ուսումնասիրվող երևույթը բավականին բարդ է ու բազմաբնույթ: Ծառայությունների ոլորտի ընդլայնման գործում զգալի դեր խաղաց նաև գիտատեխնիկական առաջընթացը: Արտադրանքի գիտատարության մակարդակի բարձրացումը տարավ ապրանքների արժեքում ծառայությունների մատուցման արժեքի բարձրացմանը:

Բանալի բառեր. ծառայությունների ոլորտ, տնտեսություն, շուկա, գրավչություն, արտադրական գործընթաց, նյութական բարիքներ, սպառող, աշխատողներ:

ЭКОНОМИЧЕСКАЯ СУЩНОСТЬ УСЛУГ, ИХ КЛАССИФИКАЦИЯ И ВОЗДЕЙСТВУЮЩИЕ
НА НИХ ФАКТОРЫ В УСЛОВИЯХ РЫНОЧНОГО ХОЗЯЙСТВА

ЭБА БАБАЯН, к.геогр.н., профессор

АРАМ ГЕВОРГЯН

ведущий научный сотрудник

экономист

Института экономики
им. М. Котаняна НАН РА

Аннотация

.Сфера услуг в целом включает в себя совокупность различных видов экономической деятельности человека. В экономической литературе существует несколько вариантов определения понятия .сфера услуг, которые иногда, противоречат друг другу, что связано со сложностью и разнохарактерностью исследуемого явления. Значительную роль в расширении сферы услуг сыграл научно-технический прогресс. Повышение уровня наукоемкости выпускаемой продукции привело к увеличению стоимости оказываемых услуг в стоимости продукции.

Ключевые слова: сфера услуг, хозяйство, рынок, привлекательность, производственный процесс, материальные блага, потребитель, работники.

THE ECONOMIC MEANING, CLASSIFICATION OF SERVICES AND FACTORS THAT AFFECT
THE DEVELOPMENT OF SERVICES SECTOR IN THE MARKET ECONOMY

EBA BABAYAN, Candidate of Sciences (Geography)

ARAM GEVORGYAN

Leading Research Associate

Economist

M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences
Republic of Armenia

Abstract

Services are types of specific economic activity or forms of relations that create definite value to consumers. One of the main directions specific to services is the fact that these types of activities, as a rule, don't cause closure of small and medium-sized enterprises, but they strengthen the differentiation of production structure. Science and technology progress has played a crucial role in increasing the share of services in GDP. The growth of production of knowledge intensive products has resulted in increase in share of services in the cost structure of goods.

Keywords: services industry, economy, market, attractiveness, production process, material goods, consumer, employees.